

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ՄԵՐՍԱՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԵՆԻԻ ՕԲՄԻԴԻԱՆԻ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ 1-ԻՆ  
ՓՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ՝



Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԳԱԾԱՎԱՆ 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....	5
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	8
1.1 Ընդհանուր տեղեկություններ հանքավայրի մասին.....	8
1.2.Նախագծի հիմնական դրույթները.....	9
1.3Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը.....	12
1.4 Պաշարների հաշվարկը.....	13
1.5Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը և համակարգը.....	16
1.6 Նախագծային կորուստներ.....	17
1.7Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմը.....	17
1.8 Հանքավայրի բացումը.....	18
1.9 Լեռնակապիտալ աշխատանքներ.....	19
1.10 Մակաբացման աշխատանքներ.....	20
1.11 Մշակման համակարգը.....	20
1.12 ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	20
1.13Բացահանքի ջրամատակարարումը և ջրահեռացումը.....	24
1.14.Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկա.....	25
1.15Նախագծի այլընտրանքը.....	27
2.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ.....	29
2.1 Ընդհանուր տեղեկություններ հանքավայրի մասին.....	29
2.2 Ռելիեֆ, երկրաձևաբանություն.....	31
2.3. Տեկտոնիկա, սեյսմիկություն, սողանքներ.....	32
2.4.Շրջանի կլիման.....	33
2.5 Մթնոլորտային օդ.....	38
2.6 Ջրային ռեսուրսներ.....	39
2.7. Հողեր.....	41
2.8. Բուսական և կենդանական աշխարհ.....	56
2.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	48
3.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ.....	51
4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	57
4.1Արտանետումները մթնոլորտ.....	60
4.2 Աղմուկ, թրթռում.....	66
4.3 Նավթամթերքներ և արդյունաբերական թափոններ.....	67
4.4 Սոցիալական ազդեցության գնահատումը.....	68
5.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	71
6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ.....	79

Հավելվածներ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	83
Օբսիդիանի հանքավայրի արդյունահանման աշխատանքների բնապահպանական կառավարման պլան.....	85
Արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյուքնում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ.....	88
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	129

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

**Շրջակա միջավայր`** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

**շրջակա միջավայրի վրա ազդեցություն`** հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

**նախատեսվող գործունեություն`** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

**ձեռնարկող`** փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

**ազդակիր համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

**շահագրգիռ հանրություն`** փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

**գործընթացի մասնակիցներ`** պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ` ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

**հայտ`** ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

**պետական փորձաքննական եզրակացություն`** հիմնադրությային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության թույլատրելիության վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրվող պաշտոնական փաստաթուղթ` համապատասխան հիմնավորումներով:

**բնության հատուկ պահպանվող տարածք`** ցամաքի (ներառյալ` մակերևութային ու

ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

**Կարմիր գիրք՝** միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

**լանդշաֆտ՝** աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ:

**հողի բերրի շերտ՝** հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով:

**խախտված հողեր՝** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

**հողածածկույթ՝** երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է:

**հողի բերրի շերտի հանման նորմեր՝** հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ<sup>3</sup>), զանգվածը (տ):

**ռեկուլտիվացում՝** խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

**կենսաբանական բազմազանություն՝** ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը:

**Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝** պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**սահմանային թույլատրելի կոնցենտրացիա՝** մթնոլորտային օդում աղտոտող առանձին նյութի այն առավելագույն կոնցենտրացիան, որը չգերազանցելու դեպքում այդ նյութը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործելիս բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության և բնական ու մարդածին շրջակա միջավայրի վրա սույն օրենքի /Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք, 11 11 1994 թ/ իմաստով:

Ստորև ներկայացվող սահմանումները և եզրույթները ներկայացվում են ՀՀ ընդերքի

մասին օրենսգրքի /28 11 2011 թ./ հոդված 3-ի:

**ընդերք՝** հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

**ընդերքօգտագործում՝** երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում.

**օգտակար հանածո՝** ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

**օգտակար հանածոյի պաշարներ՝** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

**հանքավայր՝** ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

**արտադրական լցակույտեր՝** օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ապարների կուտակումներ՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում.

**լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) լիազորած և տվյալ ոլորտում իրեն վերապահված լիազորություններն իրականացնող պետական կառավարման մարմին.

**ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝** օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝** երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում.

**բնապահպանական կառավարման պլան՝** ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում:

# ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 1.1 Ընդհանուր տեղեկություններ հանքավայրի մասին

ՀՀ Արագածոտնի մարզի, Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասի նախագիծը կատարված է «ՄԵՐՄԱՐ» ՍՊԸ –տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասի 01.04.2020թ. դրությամբ հաշվարկված պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 22.11.2020թ. թիվ 1689-Ա հրամանով, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2020թ. նոյեմբերի 17-ի թիվ 13 եզրակացության հիման վրա, Ըկարգով:

1-Ը<sub>1</sub> բլոկ- 186.9հազ.տ, 2-Ը<sub>1</sub> բլոկ-70.6հազ. տ:

Քար-հումքի ելքը օգտակար հաստվածքից կազմել է 35.97%:

Որակական ցուցանիշներով հանքավայրի օբսիդիանը համապատասխանում է 41.07-90 OUS-ի տեխնիկական պահանջներին և կարող է օգտագործվել արհեստագործական քարի արդյունահանման և դեկորատիվ-գեղազարդային իրերի արտադրության համար:

Օգտակար հանածոյի հաստատված պաշարների զբաղեցրած մակերեսն է 1-Ը<sub>1</sub> բլոկում՝ 1.32 հա, 2-Ը<sub>1</sub> բլոկում 0.6հա:

Հանքավայրը շահագործվելու է 40 տարվա ընթացքում՝ 2 փուլով:

Սույն նախագծով նախատեսվում է.

1-ին փուլը ընդունել՝ շահագործման 20 տարիների ընթացքում հաշվեկշռային պաշարները՝ 1-Ը<sub>1</sub> բլոկ- 93.5հազ.տ կամ 40300մ<sup>3</sup>, և 2-Ը<sub>1</sub> բլոկ 35.6հազ. տ կամ 15410մ<sup>3</sup> ծավալ օբսիդիան, 2-րդ փուլում՝ 1-Ը<sub>1</sub> բլոկի մնացած 93.40 հազ.տ կամ 40260մ<sup>3</sup>, և 2-Ը<sub>1</sub> բլոկը՝ 35.0հազ. տ կամ 15150մ<sup>3</sup> ծավալ օբսիդիան:

1. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել բուլդոզեր էքսկավատոր ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

2. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր:

3. Մարվող պաշարների քանակն է շահագործման 1-ին փուլում 1-Ը<sub>1</sub> բլոկ 93.5հազ.տ կամ 40300մ<sup>3</sup>, և 2-Ը<sub>1</sub> բլոկ 35.6հազ.տ կամ 15410մ<sup>3</sup>:

4. Տարեկան արտադրողականությունը՝

1-Ը<sub>1</sub> բլոկ 4675տ կամ 2015մ<sup>3</sup>, մարվող պաշար

2-Ը<sub>1</sub> բլոկ 1780տ կամ 770.5մ<sup>3</sup> մարվող պաշար:

Կորզվող պաշարները կազմում են՝

1-Ը<sub>1</sub> բլոկ 90.25հազ.տ կամ 38900մ<sup>3</sup>, և 2-Ը<sub>1</sub> բլոկ 34.19հազ.տ կամ 14800մ<sup>3</sup>

տարեկան արդյունահանվող պաշարներ՝

1-Ը<sub>1</sub> բլոկ-4512.5տ կամ 1945մ<sup>3</sup>, 2-Ը<sub>1</sub> բլոկ-1709.5տ կամ 740մ<sup>3</sup>:

4. Տեղամասի օտարման տարածքը 1-ին փուլում կազմում է 1-Ը<sub>1</sub> բլոկ 0.9հա, 2-Ը<sub>1</sub> բլոկ- 0.45հա:

5. ծառայման ժամկետը՝ 20 տարի:



6. Օգտակար զանգվածի տեղափոխումը սպառողի տրանսպորտով:

7. Կատարել խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերակուլտիվացիա:

Նախագիծը կատարելու ժամանակ ելակետային նյութեր են հանդիսացել

-Հանքավայրում կատարված երկրաբանական հետախուզական աշխատանքների հաշվետվությունը պաշարների հաշվարկմամբ:

-

## 1.2.Նախագծի հիմնական դրույթները

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Երևան-Գյումրի երկաթգծի Արագածավան կայարանից հյուսիս-արևելք 8-9կմ հեռավորության վրա: Տեղամասը տեղակայված է Արտենիի լեռան հարավ-արևմտյան լանջին՝ 1380-1445մ բարձրությունների վրա:

Մոտակա բնակավայրը Կանչ գյուղն է, որը գտնվում է տեղամասից շուրջ, 1.8կմ հյուսիս-արևմուտք և որի հետ հետախուզված օբյեկտը կապված է բարեկարգ ավտոճանապարհով: Մոտակա խոշոր երկաթգծի կայարանը Արագածավանն է, որը Երևանից գտնվում է 90կմ հեռավորության վրա:

Լեռնագրական տեսակետից տեղամասի հարակից տարածքը ներկայացնում է անտառազուրկ լեռնային շրջանին բնորոշ բլրային ռելիեֆով և սակավ խոտաբուսական ծածկով: Բարձրությունները ամբողջապես ներկայացված են հրաբխային տարակազմ լավաներով: Տիրապետող բարձրությունը Արտենի լեռն է (2047մ):

Շրջանում բնական ջրային ցանցը թույլ է զարգացած ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության հետևանքով: Այն հիմնականում ներկայացված է սելավային հոսքերի հեղեղատներով, որոնք ունեն սեզոնային բնույթ:

Շրջանում գործում է Իրինդ-Արտենի խմելու ջրատարը: Ռոտզման նպատակով կառուցված է Թալին ջրանցքը:

Շրջանը էլեկտրաէներգիայով սնվում է հանրապետական միացյալ էներգահամակարգից, ապահովված է քարագործ բանվորական և ինժեներատեխնիկական կադրերով:

Տարածաշրջանում հիմնականում զարգացած է անասնապահությունը և մասամբ՝ այգեգործությունը:

Արդյունաբերական ձեռնարկություններից շրջանում գործում են Արագածի երկաթբետոնե իրերի գործարանը, Կարմրաշենի տուֆի հանքավայրը ու մասամբ Արագածի պեռլիտի գործարանը իր շահագործվող քարհանքով և այլն, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման մանր ձեռնարկություններ:

Շրջանի կլիման չոր մայրցամաքային է, խստաշունչ ձյունառատ, բայց կարճատև ձմեռով և զով ամառով: Ձմռանն օդի ջերմաստիճանը հասնում է մինչև  $-25^{\circ}\text{C}$  (հունվար), իսկ ամռանը՝  $+21^{\circ}\text{C}$ : Մթնոլորտային տեղումներ տարեկան միջին քանակը չի գերազանցում 450մմ-ը:

Շրջանում հայտնի են տուֆի, պեմզայի, պեռլիտի, հրաբխային խարամի խոշոր

պաշարներով շահագործվող մի շարք հանքավայրեր, որոնց հենքի վրա նախկինում զարգացել էր շինանյութերի տարածաշրջանային տնտեսական նշանակություն ունեցող արդյունաբերություն: Այդ պոտենցիալը ներկայումս թերի է օգտագործվում:

Օբսիդիանն իր ֆիզիկամեխանիկական և բարձր դեկորատիվ հատկությունների շնորհիվ վաղ ժամանակներից օգտագործվել է կիրառական տարբեր բնույթի, այդ թվում զարդերի, արհեստագործական և գեղազարդային իրերի պատրաստման համար:

Օբսիդիանի գործնական օգտագործման համար ներկայացվող պահանջների : Օբսիդիանի քիմիական կազմը, գեղազարդային գնահատականը և մշակման տեխնոլոգիական ցուցանիշները որոշվել են ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի լաբորատորիայում:

Հետախուզված տեղամասի օբսիդիանը հանդես է գալիս սև, սև-արծաթագույն, շագանակագույն գունավորմամբ, որը հիմնականում ներկայացված է հոծ-զանգվածային, բժավոր, շերտավոր, փշրաքարային և ձգված նուրբ ֆյուրիալ կազմվածքով: Ապարի ֆյուրիայնությունը պայմանավորված է նրանում մուգ գորշավուն թելիկների առկայությամբ, որոնք հաճախ ունեն խճճված-մազանման և այլքաձև բնույթ և բարդացված են խմբավորված կրիստալիտների շղթաիկներով: Կրիստալիտները ներկայացված են սպիկուլիտով և նրա հետ

համեմատած առավել նուրբ տրիխիտներով: ՈՒ-նի խեցանման, ոչ այնքան հարթ կոտրվածք: Գունավորման պայծառությունը դրանցում նույնպես պայմանավորված է փայլի և թափանցիկության աստիճանով:

Օբսիդիանի փայլը տատանվում է ապակենմանից մինչև մոմանմանը (восковая): Թափանցիկությունը փոփոխվում է առանձին թիթեղների (սալիկների) հաստությունից կախված: Օբսիդիանի սև գունավորումը պայմանավորված է ապարում պարունակվող բազմաթիվ մեխանիկական խառնուրդների ներկայությամբ և կառուցվածքային տարբերությամբ, որոնք նպաստում են անդրադարձվող լույսի ճառագայթների գրեթե լրիվ կլանմանը ապարի ամբողջ զանգվածում: Շագանակագույն և սև օբսիդիանների բժավոր տեսքը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա կազմում մասնակցում են երկու տարբեր տիպերի ապակե զանգվածներ: Մի դեպքում դա թափանցիկ ապակի է, որում որպես խառնուրդ հանդիսանում են մագնետիտի փոշենման ներփակումները, ինչի հետևանքով այս ապակին կոտրվածքում համապատասխանում է սև օբսիդիանին: Երկրորդ դեպքում, օբսիդիանի դեղնաշագանակագույն անթափանց տարատեսակները ներկայացված են բազմաթիվ միկրոլիտներ և երկաթի ջրային օքսիդներով հագեցած բազմաթիվ միկրոխոռոչներ պարունակող ապակիով: Ապարագիտական տեսանկյունից օբսիդիանը գրեթե ամբողջությամբ ներկայացված է արծաթափայլ, թափանցիկ, սև և շագանակագույն թթու կազմի հրաբխային ապակիով: Դրան բնորոշ է վիտրոֆիրային կառուցվածքը: Հաճախ վիտրոֆիրային կառուցվածքում տեղաբաշխվում են պլազիոկլազի հատիկներ:

**Օբսիդիանի քիմիական կազմը**

Նմուշի համարը	Պ ա ր ու ն ա կ ու թ յ ու ն ն ե ր ը , % %										
	SiO <sub>2</sub>	Fe <sub>2</sub> O <sub>3</sub>	FeO	TiO <sub>2</sub>	Al <sub>2</sub> O <sub>3</sub>	CaO	MnO	MgO	Na <sub>2</sub> O	K <sub>2</sub> O	ԿԺՇ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Նվազագ.	73.98	0.95	0.91	0.05	12.10	0.79	0.05	0.33	4.13	4.27	0.69
Առավել.	75.73	1.82	1.14	0.06	12.47	0.87	0.06	0.42	4.22	4.37	0.72
Միջինը	74.86	1.39	1.03	0.06	12.29	0.83	0.06	0.38	4.18	4.32	0.71

**Օբսիդիանի ֆիզիկամեխանիկական հատկությունները**

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեծությունը		
			նվազագույն	առավելագույն	Միջինը
1	2	3	4	5	6
1.	Իրական խտությունը	գ/սմ <sup>3</sup>	2.32	2.36	2.35
2.	Միջին խտությունը	կգ/սմ <sup>3</sup>	2314	2354	2342
3.	Ծակոտկենությունը	%	0.17	0.42	0.31
4.	Ջրակլանելիությունը	%	0.01	0.02	0.01
5.	Ամրության սահմանը սեղմման ժամանակ				
	-չոր վիճակում	կգ/սմ <sup>3</sup>	720	790	755
	-ջրահագեցած վիճակում	կգ/սմ <sup>3</sup>	641	744	696
	-25 փուլ սառեցումից հետո	կգ/սմ <sup>3</sup>	570	684	632

Աղյուսակ 1.3

**Օբսիդիանի խճի ֆիզիկամեխանիկական հատկությունները**

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեծությունը		
			նվազագույն	առավելագույն	միջինը
1	2	3	4	5	6
1.	Միջին խտությունը	կգ/մ <sup>3</sup>	2302	2321	2313
2.	5-10մմ ֆրակցիայի ջարդելիությունը	%	17.61	19.76	18.67
3.	Ջրակլանելիությունը	%	0.01	0.02	0.01
4.	Խճի մակնիշը ըստ ջարդելիության	M	M600	M600	M600

Որակական ցուցանիշներով տեղամասի օբսիդիանը համապատասխանում է 41.07-90 OUS-ի տեխնիկական պահանջներին և կարող է օգտագործվել արհեստագործական քարի արդյունահանման և դեկորատիվ-գեղագարդային իրերի արտադրության համար:

Կատարված դաշտային աշխատանքների տվյալների համաձայն արհեստագործական քարերի տեսակաչափերին համապատասխանող տեսակավոր քար-հումքի էլքը օգտակար

հաստվածքից կազմել է 35.97%. որից 1-ին տեսակի՝ 5.36 %, 2-րդ տեսակի՝ 4.70% և 1կգ-ից ոչ պակաս կշռով 29.91% :

Արտենիի հանքավայրի 4-րդ տեղամասի օբսիդիանը մշակելիությամբ բնութագրվում է միջին բարդությամբ և բարձր գեղազարդությամբ: Այն գնահատվել է ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի լաբորատորիայում:

Օբսիդիանի գեղազարդության և մշակելիության գնահատականները տրվել են «Երկրաբանական աշխատանքների ժամանակ բնական քարերի գեղազարդության գնահատման մեթոդական ցուցումների» համաձայն, որոնցով քարի գեղազարդությունը նախատեսվում է գնահատել բալային համակարգով НИИКС-М փայլաչափի կիրառմամբ, իսկ մշակելիությունը՝ հղկման և ողորկման վրա ծախսված ընդհանուր ժամանակով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ Արտենիի հանքավայրի 4-րդ տեղամասի օբսիդիանը իր մշակելիությամբ պատկանում է II կարգին (միջին բարդության), իսկ ըստ գեղազարդության՝ I կարգին (բարձր գեղազարդության): Ընդ որում, այս ցուցանիշները բնութագրական են օբսիդիանի բոլոր տարատեսակների և քարի կտրման ցանկացած ուղղության համար:

### **1.3 Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը**

Հետախուզված տեղամասը տեղադրված է Արտենի լեռան հարավ-արևմտյան լանջին, անանուն ձորակի ձախափնյա մասում, որտեղ տեղ-տեղ մերկանում են ստորին պլիոցենի ռիլոիտ-պեոլիտ-օբսիդիանային ապարների կոմպլեքսին բնորոշ մի շարք տարատեսակներ:

Պեոլիտային կազմի ապարները տեղամասում ունեն զգալի տարածում: Այս ապարները ներկայացված են բնորոշ բաց-մոխրագույնից մինչև սպիտակ գույն ունեցող տարատեսակներով:

Տեղամասի սահմաններում և դրանց հարակից մասերում, պեոլիտների ընդհանուր հոսքի վերին հորիզոնում առանձնացվում են ռիլոիտ-պեոլիտային կազմի բրեկչիացված ապարներ, որոնք բացված են նաև հորատանցքներով: Նշված ապարները իրենց մեջ ցանի ձևով ներփակում են օբսիդիանի բազմաթիվ բեկորներ՝ հիմնականում սև և մուգ մոխրագույն գունավորությամբ: Օբսիդիանի բեկորների գծային չափսերը տատանվում են 3-ից 9սմ-ի սահմաններում: Դրանց քանակությունը այս ապարներում, մակրոսկոպիկ դիտարկումներով չի գերազանցում 8-9%-ը: Ռիլոիտ-պեոլիտային բրեկչացված ապարները տեղադրված են որպես օգտակար հանածո դիտարկվող օբսիդիանի հոծ զանգվածից կտրվածքով ներքև և հիմնատակում են օգտակար հաստվածքը:

Հետախուզության աշխատանքների արդյունքում ուսումնասիրված տարածքում եզրածվել է օբսիդիանի հոծ, զանգվածային կառուցվածքով բնորոշվող օգտակար հանածոյի շերտաձև մարմիններ, որոնք ձորակի ձախ ափին նեկայացված են հողմահարված, լվացված և մերկացված տարբեր չափերի երկու առանձին ձգված մարմինների տեսքով:

Օգտակար հաստվածքի առավելագույն հզորությունը դիտվում է թիվ 4 հորատանցքում՝ 21.5մ: Մարմինների եզրամասերում դրանց հզորությունը աստիճանաբար

նվագում է՝ օբսիդիանը հանդես է գալիս առանձին ու փոքր ներփակումներով և սեպանում է:

Օբսիդիանի օգտակար հաստվածքի ներքին կառուցվածքը համասեռ չէ: Դրա առանձին մասերում հորատանցքերով բացվել են ռիոլտ-պեռլիտային բրեկչիացված ապարների առանձին միջակայքեր, որոնց ընդհանուր հզորությունն ըստ հետախուզական փորվածքների տվյալների տատանվում է 0.5-ից 0.9մ-ի սահմաններում: Տարածականորեն դրանք չեն փոխկապակցվում և հավանաբար առաջացնում են ուսպնյակաձև ոչ մեծ ներփակումներ:

Տեղամասի օբսիդիանը հիմնատակվում է վերոհիշյալ բրեկչիացված պեռլիտ-ռիոլիտային ապարներով: Դրանց հպման հարթությունը հանդիսանում է օգտակար հաստվածքի ստորին երկրաբանական սահման:Տեղամասում հիմնականում հանդիպում են սև ու շագանակագույն գոլավոր և շագանակագույն, ինչպես նաև համատարած սև ու բերկչիանման օբսիդիանների տարատեսակներ: Օգտակար հաստվածքի սահմաններում դրանք ունեն անհամաչափ տեղաբաշխում և խիստ տարբեր գծային չափեր:

Օբսիդիանը զանգվածի սառեցման անհավասարաչափ պայմանների պատճառով ենթարկվել է խիստ ճեղքավորման (անջատման ճեղքեր), որի շնորհիվ առաջացել են առանձին բոկ մեքենաներ,որոնք հիմնականում ունեն բեկորային քարերի և անկանոն մարմինների տեսք: Անջատման ճեղքերը բնութագրվում են փոքր տարածմամբ և հիմնականում ունեն տարաբնույթ ուղղվածություն: Երբեմն ճեղքերն ունեն փոխուղղված՝ թեք կամ հորիզոնական տեղադիրք: Անջատման ճեղքերի փոխուղղվածությունը բարենպաստ է զանգվածից զուգահեռանիստի ձև ունեցող քարաբեկորների անջատման համար: Արդյունահանվող քարաբեկորների գծային չափերը կանխորոշվում են ճեղքերի միջև եղած հեռավորությամբ: Տեղամասում այն խիստ փոփոխական է, տատանվում է մի քանի սանտիմետրից մինչև 40սմ-ի, հիմնականում՝ 10-25սմ-ի սահմաններում:

Ճեղքերի լայնությունը հիմնականում փոքր է և չի գերազանցում 3-4մմ-ը, դրանց միջճեղքային տարածությունները դատարկ են: Հազվադեպ հանդիպող լայն ճեղքերը լցված են բրեկչացված պեռլիտային նյութով: Երկրաբանական կտրվածքը վերնից սահմանափակվում է մինչև 1.8մ (միջինը՝ 1.0մ) հզորությամբ ժամանակակից դեյուվիալ առաջացումներով:

Ըստ ձևաբանական առանձնահատկությունների և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասը, համաձայն «Գունագեղ և արհեստագործական քարերի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» դասվում է 3-րդ խմբին:

#### **1.4 Պաշարների հաշվարկը**

Տեղամասի օբսիդիանով ներկայացված օգտակար հանածոյի աջաթևյան մարմինը հետախուզվել է դրա տարածմանը խաչաձև կողմորոշված 3 հետախուզագծերով և դրանց վրա դասավորված հորատանցքերով ու հետախուզաառուներով, իսկ ձախաթևյան մարմինը տարածմանը խաչաձև կողմորոշված մեկ հետախուզագծով և դրա վրա դասավորված մեկ հորատանցքով ու հետախուզաառուներով, որոնցով դրանք ամբողջ

հզորությամբ (մինչև հիմնատակող բրեկչացված ռիոլիտ-պեռլիտային ապարների շերտը) հատվել և ուսումնասիրվել են:

Պաշարները եզրագծվել են 1:1000 մասշտաբի պաշարներ հաշվարկման հատակագծի և վերջինիս կտրվածքների վրա, օգտագործելով հորատանցքերի և հետախուզաառուների տվյալները:

Հետախուզված պաշարները ըստ հետախուզվածության աստիճանի գնահատել  $C_1$  կարգով և հաշվարկել երկու հաշվարկային՝ 1-  $C_1$  և 2-  $C_1$  բլոկներով:

Օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը

Բլոկի համարը և պաշարների կարգը	Մակաբացման (ներառյալ ոչ կոնդիցիոն) ապարների ընդհանուր ծավալը, $մ^3$	Օգտակար հանածոյի ծավալը, $մ^3$	Օբսիդիանի ծավալային զանգվածը, տ/ $մ^3$	Օգտակար հանածոյի պաշարները, տ	Մակաբացման միջին գործակիցը, $մ^3/տ$
1	2	3	4	5	6
Բլոկ 1- $C_1$	26351	80575	2.32	186934	0.14
Բլոկ 2- $C_1$	11274	30552	2.31	70575	0.16
Ընդամենը	37625	111127		257509	0.15

ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասի պաշարների հաշվարկման (01.04.2020թ.-ի դրությամբ)

Բլոկի համարը և պաշարների կարգը	Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը, հազ. $մ^3$	Օգտակար հանածոյի պաշարները, հազ. տ	Մակաբացման միջին գործակիցը, $մ^3/տ$
1	2	3	4
Բլոկ 1- $C_1$	26.3	186.9	0.14
Բլոկ 2- $C_1$	11.3	70.6	0.16
Ընդամենը	37.6	257.5	0.15

ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասի 01.04.2020թ. դրությամբ հաշվարկված պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 22.11.2020թ. թիվ 1689-Ա հրամանով, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2020թ. նոյեմբերի 17-ի թիվ 13 եզրակացության հիման վրա,  $C_1$  կարգով 257.5 հազ.տ քանակով:

(1- $C_1$  բլոկ)- 186.9 հազ.տ, (2- $C_1$  բլոկ)-70.6 հազ. տ:

Քար-հումքի ելքը օգտակար հաստվածքից կազմել է 35.97%:

Որակական ցուցանիշներով հանքավայրի օբսիդիանը համապատասխանում է 41.07-90 ՕՍՍ-ի տեխնիկական պահանջներին և կարող է օգտագործվել արհեստագործական քարի արդյունահանման և դեկորատիվ-գեղագարդային իրերի արտադրության համար:

Մույն նախագծով նախատեսվում է.

Հանքավայրը մշակել բաց եղանակով տարեկան արդյունահանվող՝  
-տարեկան արդյունահանվող պաշարներ՝

(1-Շ<sub>1</sub> բլոկ) 4512.5տ կամ 1945մ<sup>3</sup>, (2-Շ<sub>1</sub> բլոկ) 1709.5տ կամ 740մ<sup>3</sup>:

Կորզվող պաշարները կազմում են՝

90.25հազ.տ կամ 38900մ<sup>3</sup>, և (2-Շ<sub>1</sub>) բլոկ 34.19հազ.տ կամ 14800մ<sup>3</sup>

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով. Առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նախագծվող հանքավայրը 1-ին փուլում վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

(1-Շ<sub>1</sub> բլոկ)

-առավելագույն երկարությունը, մ	-	151
-առավելագույն լայնությունը, մ	-	83
-առավելագույն խորությունը, մ	-	18.5
-օտարման մակերեսը, հա	-	0.897

(2-Շ<sub>1</sub> բլոկ)

-առավելագույն երկարությունը, մ	-	78
-առավելագույն լայնությունը, մ	-	74
-առավելագույն խորությունը, մ	-	21.5
-օտարման մակերեսը, հա	-	0.448

Լեռնային զանգվածի տեղաբաշխումը ըստ տեղամասի հանքաստիճանների բերված է աղյուսակում:

	Բացահանքի վերջնական ծավալները, մ <sup>3</sup>		
	Լեռնային զանգված, մ <sup>3</sup>	Օբսիդիան, մ <sup>3</sup>	Մակաբացման ապարներ, մ <sup>3</sup>
1-Շ <sub>1</sub> բլոկ			
Հորիզոններ՝			
1417.0	940	220	720
1414.0	2710	1250	1460
1411.0	3790	2240	1550
1408.0	4820	3120	1700
1405.0	5350	3470	1880
1402.0	6260	4530	1730

1399.0	7740	6090	1650
1396.0	7860	6380	1480
1393.0	7430	6200	1230
1390.0	6200	5400	800
	53100	38900	14200

2-Շ1բլոկ			
Հորիզոններ`			
1408.0	800	280	520
1405.0	1780	1100	680
1402.0	2740	2020	720
1399.0	3110	2330	780
1396.0	3500	2650	850
1393.0	3570	2800	770
1390.0	2480	1760	720
1387.0	1900	1220	680
1384.0	1220	640	580
	21100	14800	6300

### 1.5 Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը և համակարգը

Տեղամասի օգտակար հանածոյի մերձակերևութային շերտաձև մարմինները տեղադրված են բարձր ֆիլտրացիոն հատկություններով օժտված ռիոլիտ-պեռլիտային խմբի ապարներում: Դրա հետևանքով տեղամասի տարածքը ջրագուրկ է և բնութագրվում է աղքատ բուսական և կենդանական աշխարհով: Տեղամասը գտնվում է բարենպաստ հիդրոերկրաբանական պայմաններում: Դրա հետախուզման սահմաններում գրունտային ջրերը բացակայում են: Տեղամասին ջրհեղեղներ չեն սպառնում: Մթնոլորտային տեղումների ջրերը կարող են ինքնահոս հեռացվել ապագա բացահանքի սահմաններից: Խմելու և տեխնիկական ջրի պահանջարկը կարող է բավարարվել մոտակա գյուղերից ավտոջրատարով բերվող ջրերի հաշվին:

Տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները ևս բարենպաստ են բաց եղանակով շահագործման համար: Ինչպես բուն տեղամասում, այնպես էլ շրջակայքում փլուզումային, սողանքային և դրա շահագործմանը խոչընդոտող գեոդինամիկ երևույթներ չեն արձանագրվել:

Օբսիդիանի շերտի համեմատաբար բարձր ճեղքավորվածության աստիճանը հնարավորություն է տալիս դրա մենակտորների արդյունահանումը կատարել առանց հորապայթեցման աշխատանքների: Ծածկող մակաբացման փուխր-բեկորային ապարներն ունեն ոչ մեծ հզորություն և դրանց հեռացումը հնարավոր է իրականացնել բուլդոզերի օգնությամբ:

Ամփոփելով վերոհիշյալը, կարելի է եզրակացնել, որ Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասի բնական պայմանները բարենպաստ են դրա բաց եղանակով շահագործման համար:



## 1.6 Նախագծային կորուստներ

Տեղամասի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբերի.

Կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում՝ թողնվում են տեղամասի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար ((1- $C_1$  բլոկ)-950մ<sup>3</sup> կամ 2.36%, (2- $C_1$  բլոկ)՝ 390մ<sup>3</sup> կամ 2.53%, ):

Շահագործողական կորուստներ՝ դրանք այն կորուստներն են, որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ: Այդ կորուստների միջին հզորությունը ընդունվում է 0.5մ, ծավալը՝ (1- $C_1$  բլոկ)՝ 450մ<sup>3</sup> կամ 1.12%, (2- $C_1$  բլոկ)՝ 220մ<sup>3</sup> կամ 1.43% :

Օգտակար հանածոն ավտոինքնաթափերով տեղափոխման ժամանակ կորուստները չնչին են և դրանք չեն հաշվառվել:

Ընդամենը կորուստները կկազմեն՝ (1- $C_1$  բլոկ)՝ 1400մ<sup>3</sup> կամ 3.47%, (2- $C_1$  բլոկ)՝ 610մ<sup>3</sup> կամ 3.96% :

## 1.7 Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմը

Տեղամասի աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Տեղամասի աշխատանքային ռեժիմն ընդունվում է՝

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր
- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր
- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ.
- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ

Տեղամասի տարեկան, ամսական և օրական արտադրողականությունները բերված են աղյուսակում:

Հh	Անվանումը	Չափման միավոր	Միջին արտադրողականությունը		
			տարեկան	օրական	հերթափոխում
<b>I Մարվող պաշար</b>					
1	(1- $C_1$ բլոկ)	մ <sup>3</sup>	2015	7.75	7.75
	(2- $C_1$ բլոկ)	մ <sup>3</sup>	770.5	2.96	2.96
<b>II Արդյունահանվող պաշարներ</b>					

2	Մակաբացման ապարներ (1-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	710	2.73	2.73
	(2-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	315	1.21	1.21
3	Օգտակար հանածո (1-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	1945	7.48	7.48
	(2-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	740	2.85	2.85
4	Լեռնային զանգված (1-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	2655	10.21	10.21
	(2-C <sub>1</sub> բլոկ)	մ <sup>3</sup>	1055	4.06	4.06

### Բացահանքի ծառայման ժամկետը

Տեղամասի ծառայման ժամկետը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$T = t_1 + t_2, \text{ տարի,}$$

որտեղ՝  $t_1$  - տեղամասի 100% արտադրական հզորության հասնելու

ժամանակաշրջանն է,  $t_1 = 0$  տարի,

$t_2$  - տեղամասի շահագործման տևողությունն է 100 % արտադրական հզորության հասնելու պահից:

$$t_2 = \frac{Q_{\text{գ}} - Q_2}{Q_{\text{տ}}} = \frac{53700 - 160}{2685} = 19.94$$

որտեղ՝  $Q_{\text{գ}}$  - կորզվող պաշարներն են երկու տեղամասերը միասին,  $Q_{\text{գ}} = 53700$  մ<sup>3</sup>

$Q_2$  - արտահանված պաշարներն են բացահաքը 100% արտադրական հզորության հասնելու պահին,  $Q_2 = 160$  մ<sup>3</sup>

$Q_{\text{տ}}$  - տեղամասի տարեկան արտադրողականությունն է ըստ օգտակար զանգվածի երկու տեղամասերը միասին,  $Q_{\text{տ}} = 2685$  մ<sup>3</sup>

$$T = 0 + 19.94 = 20 \text{ տարի:}$$

Հանքավայրը 1-ին փուլում կշահագործվի 20 տարում:

### 1.8 Հանքավայրի բացումը

Հանքավայրի բացումը կատարվում է.

1-C<sub>1</sub> բլոկում նրա հյուսիս արևմտյան մասով անցնող ավտոճանապարհի 1390մ բարձրության նիշից նախատեսված է ավտոճանապարհի անցում դեպի հանքավայրի 1399.0մ բարձրության նիշը: Ավտոճանապարհի երկարություն է 90մ, ունի 6մ լայնություն է 100%օ (զժ. թերթ Լ- 8): Հաջորդ 1396.0մ, 1393.0մ, բարձրության հորիզոնները կմշակվեն նույն ավտոճանապարհից աստիճանաբար թեքությունն իջեցնելով: Այս հորիզոնները մինչև վերջ չեն մշակվում: Շահագործման վերջին տարիներին 1396մ, 1393.0մ և 1390.0մ բարձրությամբ հորիզոնները ամբողջությամբ կարոյունահանվեն (զժ. թերթ Լ- 4) :

Հաջորդ երկրորդ տարվանից սկսած հանքավայրը կմշակվի վերևից իջնելով՝ 1417.0մ բարձրության հորիզոնից: Կտրտվելով կիջնի մինչև 1393.0մ բարձրության հորիզոնը:

Որպեսզի մշակվի հանքավայրի վերին հորիզոնները, կկառուցվի ավտոճանապարհ 1388.0մ բարձրություն ունեցող խաչմերուկից 235մ երկարությամբ, 6մ լայնությամբ, 97.87% թեքությամբ (զծ. թերթ L-10):

2-C<sub>1</sub> բլոկում նույնպես նախատեսվում է սկզբում մշակել ցածր նիշից՝ 1396մ բարձրության հորիզոնից: նախատեսվում է 1388.0մ բարձրության խաչմերուկի նիշից ավտոճանապարհի անցում դեպի 1396.0մ բարձրության հորիզոն 84մ երկարությամբ 6մ լայնությամբ և 95.24% թեքությամբ (զծ. թերթ L-8): Հաջորդ երկրորդ տարվանից սկսած կմշակվի հանքավայրի վերին հորիզոններից 1408.0մ, 1405.0մ ... բարձրություններից: Հանքավայրի 2-C<sub>1</sub> բլոկի վերին հորիզոնները կմշակվեն 1388.0մ բարձրության խաչմերուկից դեպի 1-C<sub>1</sub> բլոկի վերին հորիզոնները 235մ երկարությամբ, 6մ լայնությամբ, 97.87% թեքությամբ տարված ավտոճանապարհից : Շահագործման երկրորդ տարվա դեպի 1405.0մ բարձրության հորիզոնը տարված 85.71% թեքությամբ 105մ երկարությամբ տարված ճանապարհը Գծ L-10:

Դեպի 1-C<sub>1</sub> բլոկը տարված ավտոճանապարհից տարված մուտքային ավտոճանապարհներով կմշակվի 2-C<sub>1</sub> բլոկը վերևից դեպի ներքև աստիճանաբար իջնելով, մինչև 1399մ բարձրության հորիզոն: 1390-1396մ բարձրության հորիզոնը կմշակվի 1388.0մ բարձրություն ունեցող խաչմերուկից անցնող 84մ երկարությամբ ավտոճանապարհից: Այնուհետև թեք կիսախրամով կմշակվի 1387մ և 1384մ բարձրությամբ հորիզոնները (զծ. թերթ L-4):

Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 3.0մ:

### **1,9 Լեռնակապիտալ աշխատանքներ**

Լեռնակապիտալ աշխատանքներն են՝

ա. 1-C<sub>1</sub> բլոկում բացումը կատարվում է նրա 1399.0մ բարձրության նիշից, իսկ 2-C<sub>1</sub> բլոկում նրա 1396.0մ բարձրության նիշից:

1-C<sub>1</sub> բլոկում նրա հյուսիս արևմտյան մասով անցնող ավտոճանապարհի 1390մ բարձրության նիշից նախատեսված է ավտոճանապարհի անցում դեպի հանքավայրի 1399.0մ բարձրության նիշը: Ավտոճանապարհի երկարություն է 90մ երկարությամբ, Հողային աշխատանքների ծավալն է 220մ<sup>3</sup>:

2-C<sub>1</sub> բլոկում նախատեսված է 1388.0մ բարձրության ունեցող խաչմերուկից ավտոճանապարհի անցում դեպի 1396.0մ բարձրության հորիզոն 84մ երկարությամբ 6մ լայնությամբ և 95.24% թեքությամբ (զծ. թերթ L-10): Հողային աշխատանքների ծավալն է 340մ<sup>3</sup>:

բ. Բացահանքի շահագործման շինարարական շրջանում 1-C<sub>1</sub> բլոկում 1399.0մ բարձրության հորիզոնում 100մ<sup>3</sup> ծավալով բացված պաշարներով ապահովելու համար 320մ<sup>3</sup> ծավալով մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվում է և բարձվում է ավտոիքնաթափը և տեղափոխվում է դեպի N2 լցակույտ:

2-C<sub>1</sub> բլոկում 1396.0մ բարձրության հորիզոնում 60մ<sup>3</sup> ծավալով բացված պաշարներով ապահովելու համար 130մ<sup>3</sup> ծավալով մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվում է և բարձվում է ավտոիքնաթափը և տեղափոխվում է դեպի N2 լցակույտ::

գ. Արդյունաբերական հրապարակի շրջակայքի կարգաբերում -220մ<sup>3</sup>

Ավտոճանապարհների անցումը՝ մակաբացման ապարների հավաքումը կուտակումը կատարվում է T-130 օգնությամբ: Բուլդոզերները կօգտագործվի նաև լցակույտերում:

### **1.10. Մակաբացման աշխատանքները**

Հանքավայրը, ոչ համատարած, ծածկող ապարները ներկայացված են ժամանակակից փուխր բեկորային դելյուվիալ առաջացումներով՝ (միջինը՝ 0.2մ) և մինչև 1.8մ (միջինը՝ 1.0մ) հզորությամբ փուխր բեկորային ավազակավային առաջացումներով:

Հանքավայրի օգտակար հաստվածքի տարբեր խորություններում ներփակված և և երկրաչափորեն փոխկապակցման չենթարկվող ոչ կոնդիցիոն ապարների (բրեկչացված պեռլիտների) ծավալը ևս հաշվարկվել է: 1-Շ<sub>1</sub> բլոկում հողաբուսական շերտը բացակայում է, իսկ 2-Շ<sub>1</sub> բլոկում ոչ համատարած, տեղ տեղ կա հողաբուսական շերտ: Միասին մակաբացման ապարները (ներառյալ նաև ոչ կոնդիցիոն ապարները) շահագործման 1-ին փուլում 1-Շ<sub>1</sub> բլոկում 14200մ<sup>3</sup> է, 2-Շ<sub>1</sub> բլոկում 6300մ<sup>3</sup>:

Շահագործման առաջին 20 տարիներին 1-Շ<sub>1</sub> բլոկի 14200մ<sup>3</sup> մակաբացման ապարների 7200մ<sup>3</sup> բուլդոզերով, իսկ 7000մ<sup>3</sup>-ը ավտոինքնաթափով տեղափոխվում է 1-Շ<sub>1</sub> և 2-Շ<sub>1</sub> բլոկների միջև ձևավորվող N2 լցակույտ, որի հատակին տեղադրվում է երկաթբետոնե խողովակ տեղումներից առաջացող ջրերի հոսքի համար (գծ. L-4):

2-Շ<sub>1</sub> բլոկում մակաբացման ապարների քանակն է 6300մ<sup>3</sup>, որից 700մ<sup>3</sup>-ը ժամանակակից փուխր բեկորային դելյուվիալ առաջացումները /հողաբուսական շերտ/ կտեղափոխվի բուլդոզերով և կպահեստավորվի առանձին N1 լցակույտում, հետագայում կօգտագործվի կենսաբանական ռեկուլտիվացիայի համար: Մնացած 5600մ<sup>3</sup>-ը ավտոինքնաթափով կտեղափոխվի 2-Շ<sub>1</sub> բլոկի արևմտյան մասում ձևավորվող N3 լցակույտ գծ. թերթL-4:

### **1.11. Մշակման համակարգը**

Տեղամասերը մշակվում է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով:

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5.0մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 65°,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 45°,
- անվտանգության առափների լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30մ:

### **1.12 ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

#### **Բարձման աշխատանքներ**

Բացահանքում արդյունահանումը կատարվում է առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնային համալիրի միջոցով:

Հանույթային և բարձման աշխատանքների կիրականացվի ՅՕ-5111 մակնիշի էքսկավատորով, որի արտադրողականությունն է 150մ<sup>3</sup>/հերթ: Անհրաժեշտության դեպքում արդյունահանման ժամանակ կօգտագործվի էքսկավատորի հիդրավլիկ սեպը:

Մեկ հատ էքսկավատորը լիովին բավարար է օգտակար հանածոյի՝ (3.71մ<sup>3</sup>/հերթ), արտադրական թափոնների (6.62մ<sup>3</sup>/հերթ), մակաբացման ապարների՝ 2.56մ<sup>3</sup>/հերթ և 0.13մ<sup>3</sup>/հերթ օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ առաջացած ապարները բարձելու համար: Բուլդոզերային աշխատանքները բացահանքում մակաբացման ապարների հեռացումն է, քար-հումքի հավաքումը, արտադրական թափոնների կուտակումը, և ավտոճանապարհի բարեկարգումը: Նշված աշխատանքների համար անհրաժեշտ է 1 բուլդոզեր:

### Տրանսպորտային աշխատանքներ

Բացահանքից օգտակար զանգվածի տեղափոխումը կատարվում է սպառողի կողմից, որի պատճառով ավտոինքնաթափի հաշվարկը կկատարվի միայն մակաբացման ապարների և արտադրական թափոնների տեղափոխման համար: Տեղափոխումը մինչև 0.5կմ հեռավորությամբ լցակույտ, նախատեսվում է իրականացնել ԿՌԱԶ-256 Բ-1 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով:

Հաշվարկի ելակետային տվյալներն են՝

հերթափոխում տեղափոխվող մակաբացման ապարների քանակությունը՝ 2.42մ<sup>3</sup>/հերթ օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ խառնված ապարները, որի ծավալը կազմում է՝ (1-Շ<sub>1</sub> բլոկ)՝ 450մ<sup>3</sup>, (2-Շ<sub>1</sub> բլոկ)՝ 220մ<sup>3</sup>: Միասին կկազմեն 670մ<sup>3</sup>: Օրական 0.13մ<sup>3</sup>/հերթ:

արտադրական թափոնների քանակը 6.62մ<sup>3</sup>/հերթ,

ավտոինքնաթափերի շարժման միջինացված արագությունը - 14կմ/ժամ:

Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{մ}} = \frac{V \times K_1 \times T_h \times K_i}{T_k} = \frac{6.6 \times 0.85 \times 480 \times 0.9}{13.29} = 182.36 \text{ մ}^3/\text{հերթ}$$

որտեղ՝ V - ինքնաթափի թափքի տարողությունը , 6.6 մ<sup>3</sup>

K<sub>1</sub> - ինքնաթափի լցման գործակիցն է ըստ լեռնային զանգվածի, K<sub>1</sub> = 0.9

T<sub>h</sub> - հերթափոխի տևողությունը, 480 րոպե

K<sub>i</sub> - 1 հերթափոխի ընթացքում աշխատաժամանակի օգտագործման գործակիցն է- 0.85

T<sub>k</sub> - 1 ուղերթի տևողությունը՝ րոպե

$$T_k = \frac{2 L 60}{V_{\text{մ}}} + t_p + t_q + t_{\text{մ}} = \frac{2 \times 0.5 \times 60}{14} + 5 + 1 + 3 = 13.29$$

որտեղ՝ L - տեղափոխման հեռավորությունն է, մ

V<sub>մ</sub> - երթի միջին արագությունն է կմ/ժ

t<sub>p</sub> - ինքնաթափի բարձման տևողությունը, րոպե

t<sub>մ</sub> - մանյովրների տևողությունը, րոպե

Բանվորական ինքնաթափերի քանակը հերթափոխի ընթացքում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$N_p = \frac{Q_h \times K_w \times K_m}{Q_{\text{մ}}} = \frac{9.17 \times 1.35}{182.36} = 0.07$$

$Q_h$  – քարհանքի հերթափոխային արտադրողականությունն է:

$K_w$  - բեռների տեղափոխման անհավասարաչափության գործակիցն է,  $K_w = 1.1$ :

Ավտոինքնաթափերի ցուցակային քանակը կլինի՝

$$N_y = \frac{N_p}{K_m} = \frac{0.07}{0.8} = 0.1$$

Ընդունել 1 ավտոինքնաթափ:

որտեղ՝  $K_m$  ավտոպարկի տեխնիկական պատրաստականությունն է  $K_m = 0.8$

Աղյուսակ 2.3

N	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշը
1.	Տեղափոխվող բեռների քանակը հերթափոխում՝ Մակաբացման ապարներ և օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից խառնվելուց մաքրելը N 2 լցակույտ տարվող ապարներ	մ <sup>3</sup>	0.13
2.	Մակաբացման ապարներ	մ <sup>3</sup>	2.42
3.	Արտադրական թափոններ	մ <sup>3</sup>	6.62
4.	Տեղափոխման միջին հեռավորությունը՝	կմ	0.5
5.	Ավտոինքնաթափի բարձման տևողությունը	րոպե	5
6.	Ավտոինքնաթափի բեռնաթափման տևողությունը	րոպե	1
7.	Մանյուվրերի տևողությունը	րոպե	3
8.	Միջին երթային արագությունը՝	կմ/ժ	14
9.	Մեկ երթի տևողությունը՝	րոպե	13.29
10.	Ավտոինքնաթափի արտադրողականությունը՝	մ <sup>3</sup> /հերթ	182.36
11.	Բանվորական ինքնաթափերի քանակը	հատ	1
12.	Ավտոինքնաթափի ցուցակային քանակը՝	հատ	1

Շահագործման տարիներին դեպի լցակույտ տեղափոխվող բեռները կտեղափոխվեն 2 երթով:

### Լցակույտաառաջացում

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին լցակույտաառաջացում:

Մակաբացման ապարները որոնք կազմված են փուխր բեկորային ժամանակակից առաջացումներից և ոչ կոնդիցիոն ապարներից , 1-С1 բլոկում կազմում է 14200մ<sup>3</sup>, 2-С1

բլոկում 6300մ<sup>3</sup>: 2-Շ բլոկում 700մ<sup>3</sup> էլյուվիալ ժամանակակից առաջացումների հետ հողաբուսական շերտն է, կտեղափոխվի N1 լցակույտ, իսկ մնացած 5600 մ<sup>3</sup>-ը կտեղափոխվի N3 լցակույտ: N2 և N3 լցակույտ տարվող էլյուվիալ ժամանակակից ապարների և ոչ կոնդիցիոն ապարների քանակն է 19800մ<sup>3</sup>:

Լցակույտ կտեղափոխվի նաև օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ առաջացած շահագործական կորուսները: Այդ կորուստների ծավալը՝ 1-Շ բլոկ՝ 450մ<sup>3</sup>, 2-Շ բլոկ՝ 220մ<sup>3</sup>: Միասին կկազմեն 670մ<sup>3</sup>, կտեղափոխվեն N3 լցակույտ:

Արտադրական թափոններ 1-Շ բլոկ՝ 24908մ<sup>3</sup>, 2-Շ բլոկ՝ 9477մ<sup>3</sup>, երկու բլոկներում կկազմեն՝ 34385մ<sup>3</sup>, կտեղափոխվեն 1-Շ բլոկից N2 լցակույտ, իսկ 2-Շ բլոկից N3 լցակույտ:

Հավաքումը կատարվում է բուլդոզերի օգնությամբ:

Ծավալները հետևյալն են՝

1-ին տեղամաս՝ Մակաբացման ապարներ՝ ա. հողաբուսական շերտ	700 x1.1	770 մ <sup>3</sup>
բ. էլյուվիալ առաջացումներ՝ ավազակավեր՝ կտորներով ավազակավեր	19800 x1.2	23760 մ <sup>3</sup>
գ. օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ առաջացած շահագործական կորուսները	670 x1.2	804 մ <sup>3</sup>
գ. արտադրական թափոններ	34385x1.4	48139 մ <sup>3</sup>

որտեղ 1.1-ը, 1.2-ը 1.4-ը մշակման հետևանքով փխրեցման գործակիցներ են:

1-Շ բլոկի լցակույտը 1-Շ և 2-Շ բլոկների միջև ձևավորվող N2 լցակույտն է, որի վերին մասի մակերեսն է՝ 1060մ<sup>2</sup>, հիմքի մակերեսն է՝ 2090մ<sup>2</sup>, միջինը 8.7մ: Այս լցակույտի հատակին տեղադրվում է երկաթբետոնե խողովակ տեղումներից առաջացող ջրերի հոսքի համար (զծ. Լ-4):

N1 լցակույտը հողաբուսական շերտի լցակույտը ձևավորվում է 2-Շ բլոկի արևմտյան մասում: N1 լցակույտը, որը զբաղեցնում է 70մ<sup>2</sup> մակերես վերին մասում և 275մ<sup>2</sup> ստորին հիմքում, բարձրությունը՝ միջինը 7.0մ: N1 լցակույտի կողքին է նույն բլոկի N3 լցակույտը՝ վերին մակերեսը կազմում է 1720մ<sup>2</sup> և ստորին մակերեսը՝ 2740մ<sup>2</sup>, 7.1մ միջին բարձրությամբ:

Լցակույտաառաջացման ժամանակ մակաբացման ապարները բուլդոզերով և ավտոինքնաթափով տեղափոխվում են դեպի լցակույտերը և փոխում թեքության վրա: Նախագծով ընդունված բուլդոզերը օգտագործվում է լցակույտաառաջացման ժամանակ:

Հնարավորություն ստեղծվելուց հետո՝ հանքավայրի շահագործման 1-Շ բլոկում 16-րդ տարվանից, 2-Շ բլոկում՝ 18-րդ տարվանից սկսած դրանք աստիճանաբար

տեղափոխվում են հանքավայրի արդեն արդյունահանված հանքաստիճանների վրա փոխվում համապատասխանաբար 1-Շ: բլոկում 1393.0մ բարձրության վրա և 2-Շ: բլոկում 1390.0մ բարձրության վրա և հարթեցվում է ստեղծելով ներքին լցակույտաառաջացում:

Մինչ շահագործման ավարտը կտեղափոխվի 24600մ<sup>3</sup> մակաբացման ապարներ, որն իրենից ներկայացնում է N3 լցակույտի և N2 լցակույտ տարված 2-րդ յարուսի ապարները: Շահագործման առաջի փուլի ավարտից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ կտեղափոխվի 700մ<sup>3</sup> ծավալով հողաբուսական շերտը և կլցվի երկու տեղամասերում՝ 1-Շ: բլոկում -1396.մ բարձրության հորիզոնի -5800մ<sup>2</sup> մակերեսը 0.1մ բարձրությամբ և 2-Շ: բլոկի 1393.0մ հատակի 540մ<sup>2</sup> մակերեսը 0.1մ բարձրությամբ կ հարթեցվի:

30255մ<sup>3</sup> ապարները, մինչև 2-րդ փուլի ավարտը, կմնան N2 արտաքին լցակույտում 1-ին յարուսի տեսքով հետագա հաջորդ 2-րդ փուլում՝ շահագործման 21-40 տարիների ընթացքում արդյունահանման ընթացքը չխոչնդոտելու համար, այնուհետև նույնպես կտեղափոխվեն արդյունահանված տարածքներ՝ վերջնական ռեկուլտիվացիայի ժամանակ:

Լցակույտաառաջացումը ըստ տարիների և դրանց վերջնական դիրքերը բերված են նախագծի գծագրական մասում (Լ-8-12):

### **Բացահանքի մշակման ժամանակացույցային պլանը**

Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում նախատեսվում է կատարել բացահանքի մշակման ժամանակացույցային պլանին համապատասխան, որի համաձայն բացահանքի հանքաստիճանները մշակվում են 3.0մ բարձրությամբ հանքաստիճաններով, հաջորդաբար, վերնից - ներքև:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ընդունված է (1-Շ: բլոկ) 4512.5տ կամ 1945մ<sup>3</sup>, (2-Շ: բլոկ) 1709.5տ կամ 740մ<sup>3</sup> օբսիդիան:

### **1,13 Բացահանքի ջրամատակարարումը և ջրահեռացումը**

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է է GAZ 3307 ջրատար ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է IIIH-BIIB-1.4 ջրի ցիստեռնով:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 3

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ<sup>3</sup>,

n1 - բանվորների թիվն է - 3

N1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ<sup>3</sup>/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:



Այսպիսով՝  $W = (3 \times 0.016 + 3 \times 0.025) 260 = 31.98 \text{մ}^3/\text{տարի}$ , միջին օրեկան  $0.123 \text{մ}^3$ :

Կենցաղային կեղտաջրերը՝  $0.123 \times 0.85 = 0.1 \text{մ}^3$  օրեկան լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա մաքրման կայան:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը  $1 \text{մ}^2$  տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է  $0.5 \text{լիտր}/\text{մ}^2$ : Փոշենստեցման մակերեսները կազմում են բացահանքում աշխատանքային հրապարակը  $1400 \text{մ}^2$ , լցակույտերի վրա  $2600 \text{մ}^2$  և ավտոճանապարհների վրա  $1900 \text{մ}^2$ , ընդամենը՝  $5900$ : Ընդունելով ջրի տեսակարար ծախսը  $0.5 \text{լ}/\text{մ}^2$ , կստանանք  $5900 \text{մ}^2 \times 0.5 = 2950 \text{լիտր}$ :

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 5տ ջրի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցուղում է տաք և չոր եղանակներին, աշխատանքային հրապարակը կաորդ է ջրել 2 անգամ: Ջրցան մեքենայի աշխատանքը կապահովվի պայմանագրային հիմունքներով:

#### **1.14. Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան**

Բացահանքում լեռնային աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան

<<Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրերի մշակման անվտանգության տեխնիկայի միասնական կանոնների>>:

<<Արդյունաբերական ձեռնարկություններում էլեկտրատեխնիկական սարքավորումների շահագործման անվտանգության տեխնիկայի կանոնների>>:

<<Շինանյութերի արդյունաբերությունում անվտանգության տեխնիկայի և արտադրական կանոնների>> և այլն, որոնցից արժե նշել.

աշխատանքի ընդունվող բոլոր բանվորների համար անցկացվում է անվտանգության կանոնների նախնական ուսուցում;

բանվորների, վարպետների և այլաշխատողների կրկնակի

հրահանգավորումը կատարվում է երեք ամիսը մեկ՝ տվյալ տեղամասի անմիջական ղեկավարի կողմից:

հերթափոխի սկզբում լեռնային վարպետի կողմից աշխատանքային տեղերի գնումը;

յուրաքանչյուր աշխատող պետք է ստանա կոնկրետ առաջադրանք և ապահովված լինի աշխատանքային սարքին գործիքներով և պաշտպանական միջոցներով;

բոլոր սարքավորումների գործարկումից առաջ պետք է ստուգվեն բոլոր դետալների և հանգույցների սարքինությունը:

Հանքավայրի շահագործման ժամանակ պետք է հստակ և հաստատուն կերպով կազմակերպվի հակահրդեհային պոֆիլակտիկա արդյունահանող ձեռնարկությունների համար ըստ գոյություն ունեցող հակահրդեհային անվտանգության կանոնների և նորմերի:

Հրդեհի փոքր օջախների վերացման համար պետք է ունենալ հակահրդեհային ինվենտարի և գործիքների մոբիլիզացիոն պաշար (բահեր, դույլեր, կրակմարիչներ և այլն):

